

«Վավերացնում են»

Հայաստանի Հանրապետության

Նախագահ Ռ. Քոչարյան

17 ապրիլի 2007թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 մարտի 2007 թվականի N 398-Ն

538 ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ԻՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ին միջգերատեսչական հակազդման և միասնական գործողությունների իրականացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի N 316 որոշմամբ հաստատված ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ի կանխարգելման հանրապետական ծրագրի շարունակականության ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ին հակազդման ազգային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ս. Սարգսյան

2007թ. ապրիլի 12
Երևան

ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ԶԻԱՐ-ին հակազդման

Ներածություն

ՄԻԱՎ վարակի համաճարակը Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետությունում մարդու իմունային անբավարարության վիրուսով (այսուհետ՝ ՄԻԱՎ) վարակվածության և ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (այսուհետ՝ ՉԻԱՐ) դեպքերի գրանցումը սկսվել է 1988թ.-ից: Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ԶԻԱՐ-ի վիճակագրությունը ներկայանում է հետևյալ կերպ. 1988թ.-ից մինչև 2002թ.-ի մարտի 31-ը Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 181 դեպք Հայաստանի Հանրապետության քաղաքացիների շրջանում:

ՄԻԱՎ/ԶԻԱՐ-ի կանխարգելման առաջին ազգային ծրագրի իրականացման ընթացքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների շրջանում ՄԻԱՎ վարակի 248 նոր դեպք է արձանագրվել (2002թ. ապրիլի 1-ից մինչև 2006թ. դեկտեմբերի 31-ը): ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումն ըստ տարիների.

2002թ. (ապրիլի 1-ից դեկտեմբերի 31-ը)	29
2003թ.	29
2004թ.	49
2005թ.	75
2006թ.	66:

Արձանագրված դեպքերի թվի աճը հիմնականում պայմանավորված է լաբորատոր ախտորոշման հնարավորությունների ընդլայնմամբ, ՄԻԱՎ-ի նկատմամբ կանավոր խորհրդատվության և հետազոտության կետերի ստեղծմամբ, բնակչության տարբեր խմբերի շրջանում ՄԻԱՎ/ԶԻԱՐ-ի վերաբերյալ իրազեկության բարձրացմամբ, նաև բնակչության առավել խոցելի խմբերի շրջանում կանխարգելիչ միջոցառումների իրականացմամբ:

Այսպիսով, 1988թ.-ից մինչև 2006թ. դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 429 դեպք Հայաստանի Հանրապետության քաղաքացիների շրջանում:

ՄԻԱՎ-ով վարակվածների զգալի մեծամասնությունը (74,4%) 20-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով հիվանդների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 326 մարդ (76%), իգական սեռի ներկայացուցիչների մոտ արձանագրվել է վարակի 103 դեպք (24%): ՄԻԱՎ վարակի 9 դեպք (2,1%) է արձանագրվել երեխաների մոտ:

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղիներն են թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակումը (52%) և հետերոսեքսուալ ճանապարհը (40,3%): Սրանցից զատ, Հայաստանում արձանագրվել են մորից երեխային, արյան և հոմոսեքսուալ ճանապարհներով ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքեր:

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումն ըստ փոխանցման ուղիների ունի հետևյալ պատկերը.

Թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով	52,0%
Հետերոսեքսուալ փոխանցման ուղի	40,3%
Մորից երեխային	1,9%
Հոմոսեքսուալ փոխանցման ուղի	1,4%
Արյան միջոցով	0,5%
Անհայտ	3,9%

ՄԻԱՎ վարակով հիվանդներից 151-ի մոտ (որոնցից՝ 27 կին, 5 երեխա) ախտորոշվել է ՁԻԱՀ, ըստ որում, 46-ը՝ 2006թ. ընթացքում: Համաճարակի սկզբից գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների մահվան 99 դեպք: Մահացածների թվում կան 18 կին և 3 երեխա:

Թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով բոլոր վարակվածները եղել են տղամարդիկ, ընդ որում՝ նրանց մի մասը ժամանակավոր բնակվել և, հավանաբար, ՄԻԱՎ-ով վարակվել է Ռուսաստանի Դաշնությունում և Ուկրաինայում: Ի դեպ, բոլոր ՄԻԱՎ վարակով հիվանդ տղամարդկանց մեծամասնությունը (69%) նույնպես թմրամիջոցների ներարկային օգտագործող է, իսկ գրեթե բոլոր կանայք (98%) վարակվել են սեռական ճանապարհով:

ՄԻԱՎ վարակի դեպքերի առավելագույն թիվն արձանագրվել է մայրաքաղաք Երևանում՝ 215 դեպք, որը կազմում է բոլոր գրանցված դեպքերի գրեթե կեսը: ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի թվով երկրորդ տեղում Շիրակի մարզն է՝ 9,1%:

Հաշվարկային տվյալներով հանրապետությունում առկա է 2800 ՄԻԱՎ վարակ ունեցող մարդ:

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի տարածումը նվազեցնելու համար մշակվել է առաջին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագիրը 2002–2006թթ. համար: Ծրագրի մշակման գործընթացում ընդգրկվեցին պետական մարմինների և մասնավոր ոլորտի ներկայացուցիչներ: Ծրագիրը մշակվել է ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի և ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի տրամադրած տեխնիկական աջակցությամբ:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման միջոցառումները ներառում են բոլոր հիմնական ոլորտները, որոնք նախատեսված են եղել 2002-2006թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագրով: Ծրագրի իրականացումը ցույց է տալիս, որ կանխարգելման մի շարք ռազմավարություններ արդյունավետ են բնակչության տարբեր խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը նվազեցնելու, գիտելիքների մակարդակը բարձրացնելու, անվտանգ սեռական վարքագիծ ձևավորելու համար: Վերջին տարիներին երկրում իրականացված մի շարք ռազմավարություններ նախատեսված չէին ազգային ծրագրով և ներդրվել էին ի պատասխան նոր մարտահրավերների: Կան որոշ ոլորտներ, որտեղ բավարար չափով կանխարգելիչ ռազմավարություններ չեն իրագործվում՝ 10-19 տարիքային խմբի առավել խոցելի դեռահասներ և երիտասարդներ (հակասոցիալական վարք դրսևորած երեխաներ և առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ) և 15-19 տարիքային խմբի առավել վտանգի ենթարկվող դեռահասներ և երիտասարդներ (երիտասարդ թմրամիջոցների ներարկային օգտագործողներ, երիտասարդ մարմնավաճառներ և երիտասարդ հոմոսեքսուալ տղամարդիկ), տեղաշարժվող բնակչություն, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անձնակազմ:

Բավարար չեն նաև ՄԻԱՎ-ով վարակված երեխաների և ՄԻԱՎ վարակով հիվանդ ծնողներից ծնված երեխաներին տրամադրվող խնամքի ու աջակցության ծավալները:

2006թ. Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ռազմավարական պլանի հիման վրա մշակվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրա-

գիրը (այսուհետև՝ Ազգային ծրագիր), որի հիմնական նպատակը 2007-2011թթ. ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի համաճարակին արդյունավետ հակազդման ձևավորումն է:

Ռազմավարություններն ու գործողություններն ուղղված են ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի համաճարակին արդյունավետ հակազդմանը և ներառում են 6 հիմնական բաժին.

1. ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ին միջգերատեսչական հակազդման զարգացում
2. ՄԻԱՎ վարակի կանխարգելում
3. Բուժում, խնամք և աջակցություն
4. Մոնիտորինգ և գնահատում
5. Կառավարում, համակարգում և համագործակցություն
6. Ֆինանսավորում և ֆինանսական միջոցների հավաքագրում:

1. ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ին միջգերատեսչական հակազդման զարգացում

Նպատակ 1. Ընդլայնել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների, նաև քաղաքացիական հասարակության հակազդումը և ստանձնած միջազգային պարտավորություններն ընդդեմ ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի համաճարակի:

Ռազմավարություն 1. Պետական մարմինների կողմից ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ին և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններին վերաբերող հարցերի կարևորում:

Ռազմավարություն 2. ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի համաճարակին արդյունավետ հակազդելու նպատակով ՉԻԱՅ-ի մասին գործող օրենքում միջազգային ընդունված սկզբունքներին համապատասխան փոփոխությունների և լրացումների կատարում, օրենսդրության հետագա կատարելագործում՝ սահմանված կարգով:

Ռազմավարություն 3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ին և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններին վերաբերող հարցերի կարևորում:

Ռազմավարություն 4. ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խմբերի շրջանում վարքագծի փոփոխմանն ուղղված հաղորդակցման ռազմավարության մշակում:

Նպատակ 2. Պայքար բնակչության խոցելի խմբերի, ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ով հիվանդների, ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ով հիվանդ ծնողներից ծնված երեխաների նկատմամբ խարանի և խտրականության դեմ:

Ռազմավարություն Բնակչության խոցելի խմբերի, այդ թվում՝ առավել խոցելի երիտասարդների, առավել վտանգի ենթարկվող դեռահասների, ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ով հիվանդների, ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ով հիվանդ ծնողներից ծնված երեխաների նկատմամբ հակախտրական, հանդուրժողական վերաբերմունքի ձևավորում:

Ակնկալվող արդյունքներ

1. Ազգային մակարդակով կիրականացվի ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի համաճարակին միջգերատեսչական հակազդեցություն կանխարգելիչ միջոցառումների հետագա զարգացման նպատակով (2007-2011թթ.):
2. Պետական մարմինների ղեկավարները կներգրավվեն ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելմանն առնչվող արդիական խնդիրների քննարկումներում (2007-2011թթ.):
3. Կապահովվի ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ին հակազդման ազգային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման 35%-ի հատկացումը պետական բյուջեից (2011թ.):
4. Տեղական և դոնոր կազմակերպությունների, մասնավոր ոլորտի ռեսուրսները կներգրավվեն ազգային մակարդակով ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ին հակազդման գործընթացում (2007-2011թթ.):
5. ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի ոլորտին առնչվող առկա օրենսդրությունը կհամապատասխանեցվի միջազգային ընդունված սկզբունքներին (2008թ.):

6. Տեղական ինքնակառավարման մարմինները կներգրավվեն ազգային մակարդակով ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդման գործընթացում (2007-2011թթ.):
7. ՁԼՄ-ները լայնորեն կներգրավվեն առավել խոցելի դեռահասների և երիտասարդների, առավել վտանգի ենթարկվող դեռահասների և երիտասարդների, ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդների, ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդ ծնողներից ծնված երեխաների հանդեպ խարանի և խտրականության վերացման գործընթացում և պատշաճ կլուսաբանեն ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին վերաբերող հարցերը (2007-2011թթ.):

2. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելում

Նպատակ 1. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելում թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում:

Ռազմավարություն 1. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրերի զարգացում:

Ռազմավարություն 2. Թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ներուժի զարգացում՝ ծրագրերի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով:

Ակնկալվող արդյունքներ

1. Երևանում և 4 մարզերում կիրականացվեն ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելմանը և վնասի նվազեցմանն ուղղված ծրագրեր թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում (2007-2011թթ.):
2. Կստեղծվի թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ցանց (2007թ.):
3. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդ թմրամիջոցների ներարկային օգտագործողների համար մշակված և ներդրված կլինեն փոխարինող բուժման ծրագրեր (2007-2011թթ.):
4. Կընդլայնվի թմրամիջոցների ներարկային օգտագործողների ընդգրկումը վնասի նվազեցման ծրագրերում. ոչ պակաս, քան 60%-ն ընդգրկված կլինի ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրերում և կունենա համապատասխան հասանելիություն ՄԻԱՎ-ի նկատմամբ կանավոր խորհրդատվության և հետազոտության, սոցիալ-հոգեբանական և իրավաբանական ծառայություններին, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բուժման և այլ ծառայություններին, որոնք տրամադրվում են ծրագրերի շրջանակներում (2007-2011թթ.):
5. Թմրամիջոցների ներարկային օգտագործողների 85%-ը կդրսևորի ՄԻԱՎ-ի փոխանցման վտանգը նվազեցնող վարքագիծ (2010-2011թթ.):
6. Թմրամիջոցների ներարկային օգտագործողների 85%-ը կունենա ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ (2010-2011թթ.):

Նպատակ 2. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելումն մարմնավաճառների շրջանում:

Ուազմավարություն 1. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումներում մարմնավաճառների ընդգրկվածության ընդլայնում:

Ուազմավարություն 2. Մարմնավաճառների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների ներուժի զարգացում՝ ծրագրերի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով:

Ակնկալվող արդյունքներ

1. Երևանում և հանրապետության 7 մարզերում կիրականացվեն ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ծրագրեր մարմնավաճառների շրջանում (2007-2011թթ.):
2. Կատեղծվի մարմնավաճառների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ցանց (2007թ.):
3. Կընդլայնվի մարմնավաճառների ընդգրկումը ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ծրագրերում. նրանց ոչ պակաս, քան 60%-ն ընդգրկված կլինի այդ ծրագրերում և կունենա համապատասխան հասանելիություն ՄԻԱՎ-ի նկատմամբ կանավոր խորհրդատվության և հետազոտության, սոցիալ-հոգեբանական և իրավաբանական ծառայություններին, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բուժման և այլ ծառայություններին, որոնք տրամադրվում են ծրագրերի շրջանակներում (2007-2011թթ.):
4. Մարմնավաճառների շրջանում պահպանակի օգտագործումը կհասնի 90%-ի (2010-2011թթ.):
5. Մարմնավաճառների 80%-ը կունենա գիտելիք ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման վերաբերյալ (2010-2011թթ.):

Նպատակ 3. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելումն հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում:

Ուազմավարություն 1. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումներում հոմոսեքսուալ տղամարդկանց ընդգրկվածության ընդլայնում:

Ուազմավարություն 2. Հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների ներուժի զարգացում՝ ծրագրերի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով:

Ակնկալվող արդյունքներ

1. Երևանում և հանրապետության 2 մարզերում կիրականացվեն ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ծրագրեր հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում (2007-2011թթ.):
2. Կատեղծվի հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ցանց (2007թ.):
3. Կընդլայնվի հոմոսեքսուալ տղամարդկանց ընդգրկումը ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ծրագրերում. նրանցից առնվազն 1500-ն ընդգրկված կլինեն այդ ծրագրերում և կունենան համապատասխան հասանելիություն ՄԻԱՎ-ի նկատմամբ կանավոր խորհրդատվության և հետազոտության, սոցիալ-հոգեբանական և իրավաբանական ծառայություններին, սեռական ճանապարհով փո-

խանցվող հիվանդությունների բուժման և այլ ծառայություններին, որոնք տրամադրվում են ծրագրերի շրջանակներում (2007-2011թթ.):

4. Տղամարդու հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ հոմոսեքսուալ տղամարդկանց կողմից պահպանակի օգտագործումը կհասնի 80%-ի (2010-2011թթ.):
5. Հոմոսեքսուալ տղամարդկանց 80%-ը գիտելիք կունենա ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման վերաբերյալ (2010-2011թթ.):

Նպատակ 4. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում քրեակատարողական հիմնարկներում գտնվողների շրջանում:

Ռազմավարություն 1. Քրեակատարողական հիմնարկներում գտնվողների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման միջոցառումների իրականացում:

Ռազմավարություն 2. Քրեակատարողական հիմնարկներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման համար ներուժի զարգացում:

Ակնկալվող արդյունքներ

1. Վնասի նվազեցման ծրագրեր կիրականացվեն բոլոր քրեակատարողական հիմնարկներում (2011թ.):
2. Հաստատված կլինեն նորմատիվային փաստաթղթեր, որոնք կկանոնակարգեն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելիչ միջոցառումների իրականացումը քրեակատարողական հիմնարկներում (2007թ.):
3. Կզարգացվի «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման համակարգը և կգործի բոլոր քրեակատարողական հիմնարկներում (2007թ.):
4. Կնշակվեն և կհաստատվեն նորմատիվային փաստաթղթեր՝ բուժսպասարկման բաժինների միջոցով քրեակատարողական հիմնարկներում գտնվողներին կամավոր խորհրդատվություն և հետազոտություն տրամադրելու վերաբերյալ (2007թ.):
5. Քրեակատարողական հիմնարկներում գտնվողների 100%-ին հասանելի կլինեն ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվությունը և հետազոտությունը (2007-2011թթ.):
6. Քրեակատարողական հիմնարկներում գտնվողների 100%-ին հասանելի կլինեն պահպանակները և միանվագ, մանրեագերծ ներարկման պարագաները (2010-2011թթ.):

Նպատակ 5. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում տեղաշարժվող բնակչության շրջանում:

Ռազմավարություն 1. Տեղաշարժվող բնակչության շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման մոտեցումների մշակում:

Ռազմավարություն 2. Տեղաշարժվող բնակչության շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրերի իրականացում:

Ռազմավարություն 3. Տեղաշարժվող բնակչության շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման նպատակով ներուժի զարգացում:

Ակնկալվող արդյունքներ

1. Համայնքային մակարդակով կմեծանա կանանց դերը ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված գործընթացում (2007-2011թթ.):
2. Կստեղծվի ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ին ազգային հակազդման և թրաֆիքինգի ծրագրերի համագործակցության արդյունավետ համակարգ (2007թ.):
3. Կապահովվի երկկողմանի համագործակցություն ԱՊՀ երկրների հետ՝ ուղղված տեղաշարժվող բնակչության շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ին հակազդման միջոցառումներին (2007թ.):
4. 100%-ով կապահովվեն մեկնելուց առաջ և ժամանելուց հետո տեղեկատվության տրամադրումը և ՄԻԱՎ-ի նկատմամբ կամավոր խորհրդատվության և հետազոտության ծառայության հասանելիությունը սահմանների հատման նախընտրելի վայրերում (2011թ.):
5. Տեղաշարժվող բնակչության 75%-ը կունենա ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ (2010-2011թթ.):

Նպատակ 6. ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելում 10-19 տարիքային խմբի առավել խոցելի դեռահասների և երիտասարդների (հակասոցիալական վարք դրսևորած երեխաներ և առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ) և 15-19 տարիքային խմբի առավել վտանգի ենթարկվող դեռահասների և երիտասարդների (երիտասարդ թմրամիջոցների ներարկային օգտագործողներ, երիտասարդ մարմնավաճառներ և երիտասարդ հոմոսեքսուալ տղամարդիկ) շրջանում:

Ռազմավարություն 1. Առավել խոցելի դեռահասների և երիտասարդների ու առավել վտանգի ենթարկվող դեռահասների և երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման մոտեցումների մշակում:

Ռազմավարություն 2. Առավել խոցելի դեռահասների և երիտասարդների ու առավել վտանգի ենթարկվող դեռահասների և երիտասարդների համար «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման համակարգի ստեղծում և ուսուցման իրականացում:

Ռազմավարություն 3. 15-19 տարեկան երիտասարդ թմրամիջոցների ներարկային օգտագործողների՝ ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ով և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով վարակման վտանգի նվազեցում:

Ռազմավարություն 4. 15-19 տարեկան երիտասարդ մարմնավաճառների՝ ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ով և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով վարակման վտանգի նվազեցում:

Ռազմավարություն 5. 15-19 տարեկան երիտասարդ հոմոսեքսուալ տղամարդկանց՝ ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ով և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով վարակման վտանգի նվազեցում:

Ռազմավարություն 6. 10-19 տարեկան առավել խոցելի դեռահասների և երիտասարդների՝ ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ով և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով վարակման վտանգի նվազեցում:

Ռազմավարություն 7. Առավել խոցելի դեռահասների և երիտասարդների ու առավել վտանգի ենթարկվող դեռահասների և երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելման ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների ներուժի զարգացում՝ ծրագրերի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով:

Ակնկալվող արդյունքներ

1. «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման համակարգը կծավորվի և կներդրվի առավել խոցելի դեռահասների և երիտասարդների ու առավել վտանգի ենթարկվող դեռահասների և երիտասարդների շրջանում՝ ապահովելով 60% ընդգրկվածություն (2011թ.):
2. Առավել խոցելի դեռահասների և երիտասարդների ու առավել վտանգի ենթարկվող դեռահասների և երիտասարդների 45%-ը կընդգրկվի իրականացվող ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելման միջոցառումներում (2011թ.):
3. Դեռահասներին և երիտասարդներին բարյացակամ առողջապահական ծառայությունների հասանելիությունը կապահովվի երկրի ողջ տարածքով (2011թ.):
4. Դեռահասներին և երիտասարդներին բարյացակամ առողջապահական ծառայությունների մասնագետների 100%-ը կվերապատրաստվի (2011թ.):

Նպատակ 7. ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելում 15-24 տարեկան դեռահասների և երիտասարդների շրջանում:

Ռազմավարություն 1. Ուսումնական ծրագրերում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ին վերաբերող խնդիրների ներառման ընդլայնում:

Ռազմավարություն 2. «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման իրականացում:

Ռազմավարություն 3. Դեռահասներին և երիտասարդներին բարյացակամ առողջապահական ծառայությունների ընդլայնում:

Ռազմավարություն 4. Կանավոր խորհրդատվության և հետազոտության ծառայությունների հասանելիության մեծացում:

Ռազմավարություն 5. Պահպանակների հասանելիության ապահովում:

Ակնկալվող արդյունքներ

1. 15-24 տարեկան դեռահասների և երիտասարդների 90%-ը կունենա ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ (2008թ.):
2. 15-24 տարեկան դեռահասների և երիտասարդների 95%-ը կունենա ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ (2010-2011թթ.):

Նպատակ 8. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելումն ՌՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների, ՌՀ պաշտպանության նախարարության, ՌՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՌՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անձնակազմի շրջանում:

Ռազմավարություն 1. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններին առնչվող խնդիրների վերաբերյալ պլանավորված կրթական համակարգի ստեղծում:

Ռազմավարություն 2. «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման համակարգի ստեղծում և ուսուցման իրականացում:

Ռազմավարություն 3. Անձնակազմի ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և անվտանգ սեռական վարքագծի վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:

Ռազմավարություն 4. Պահպանակների մատչելիության ապահովում:

Ռազմավարություն 5. ՌՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների, ՌՀ պաշտպանության նախարարության, ՌՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՌՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անձնակազմի շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման նպատակով ներուժի զարգացում:

Ռազմավարություն 6. ՌՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների, ՌՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՌՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անձնակազմի մասնագիտական պարտականությունները կատարելիս ՄԻԱՎ-ով վարակման կանխարգելում:

Ակնկալվող արդյունքներ

1. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին առնչվող խնդիրները կներառվեն ՌՀ պաշտպանության նախարարության և ՌՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անձնակազմի համար նախատեսված ընթացիկ ուսումնական ծրագրերում (2008թ.):
2. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման վերաբերյալ ուսումնական ծրագրեր կներդրվեն ՌՀ պաշտպանության նախարարության և ՌՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ուսումնական հաստատություններում (2007-2011թթ.):
3. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը ՌՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների, ՌՀ պաշտպանության նախարարության, ՌՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՌՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անձնակազմի շրջանում կկազմի 70% (2010-2011թթ.):
4. «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման համակարգում ՌՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների, ՌՀ պաշտպանության նախարարության, ՌՀ կառավարությանն առընթեր

- ազգային անվտանգության ծառայության և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անձնակազմի ընդգրկվածությունը կկազմի 100% (2011թ.):
5. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անձնակազմի սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների կանխարգելման և դրանց բարդություններից խուսափելու վերաբերյալ գիտելիքների մակարդակը կկազմի 75% (2011թ.):
 6. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անձնակազմի համար կապահովվի ՄԻԱՎ-ի նկատմամբ կամավոր խորհրդատվության և հետազոտության ծառայությունների 100% հասանելիություն (2011թ.):
 7. Բժշկական ծառայությունները կապահովվեն ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների համար անհրաժեշտ թեստ-համակարգերի բավարար քանակով (2007-2011թթ.):
 8. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անձնակազմի շրջանում կծնավորվի շարժառիթ ՄԻԱՎ-ի նկատմամբ կամավոր խորհրդատվության և հետազոտության ծառայություններ դիմելու համար (2007-2011թթ.):
 9. Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բուժման հասանելիությունը կապահովվի 100%-ով (2011թ.):
 10. Կմշակվեն կանոններ, չափորոշիչների համակարգ՝ մասնագիտական գործունեության ընթացքում անվտանգության ապահովման համար (2007-2008թթ.):
 11. Պահակախմբի և շրջիկ պարեկային ծառայության անձնակազմերը 100%-ով կապահովվեն կանխարգելիչ միջոցներով և առաջին օգնության դեղատուփով, նաև դրանց ճիշտ օգտագործման ուղեցույցներով (2011թ.):
 12. ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների անձնակազմը բավարար գիտելիքներ կունենա կանխարգելիչ միջոցների և առաջին օգնության դեղատուփի ճիշտ օգտագործման վերաբերյալ (2011թ.):

Նպատակ 9. Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում:

Ռազմավարություն 1. Հղի կանանց համար ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության մատչելիության ապահովում:

Ռազմավարություն 2. ՄԻԱՎ-ով վարակված հղիներին և նրանցից ծնված երեխաներին հակառետրովիրուսային կանխարգելիչ բուժման տրամադրում:

Ակնկալվող արդյունքներ

1. Բոլոր անտենատալ կլինիկաները (100%) կտրամադրեն ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվություն և հետազոտություն (2009-2011թթ.):
2. ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվության և հետազոտության ծառայություններում ընդգրկված անձնակազմը 100%-ով վերապատրաստված կլինի (2009-2011թթ.):

3. ՄԻԱՎ-ով վարակված հղի կանանց 100%-ը կստանա մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում (2007-2011թթ.):

Նպատակ 10. ՄԻԱՎ-ի նկատմամբ կամավոր խորհրդատվության և հետազոտության տրամադրում:

Ռազմավարություն 1. ՄԻԱՎ վարակի ախտորոշման համակարգի գործունեության ապահովում:

Ռազմավարություն 2. ՄԻԱՎ-ի նկատմամբ կամավոր խորհրդատվության և հետազոտության համակարգի ընդլայնում:

Ռազմավարություն 3. Տրամադրվող ՄԻԱՎ-ի նկատմամբ կամավոր խորհրդատվության և հետազոտության ծառայությունների որակի բարելավում:

Ակնկալվող արդյունքներ

1. ՄԻԱՎ-ի նկատմամբ կամավոր խորհրդատվության և հետազոտության կետեր կգործեն բոլոր բուժկանխարգելիչ հաստատություններում (2007-2011թթ.):
2. Կպատրաստվեն կարիքներին համապատասխան թվով ՄԻԱՎ-ի նկատմամբ կամավոր խորհրդատվություն և հետազոտություն տրամադրողներ (2007-2011թթ.):
3. Կերաշխավորվի ՄԻԱՎ վարակի ախտորոշման համակարգի գործունեության համար կայուն ֆինանսավորումը (2007-2011թթ.):

Նպատակ 11. ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում դոնորական արյան և արյան բաղադրիչների միջոցով:

Ռազմավարություն ՄԻԱՎ-ի վերաբերյալ դոնորական արյան և արյան բաղադրիչների լաբորատոր հետազոտությունների որակի ապահովում:

Ակնկալվող արդյունքներ

- Դոնորական արյան նմուշների 100%-ը կհետազոտվի ՄԻԱՎ-ի վերաբերյալ (2007-2011թթ.):

Նպատակ 12. Բուժկանխարգելիչ կազմակերպություններում ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման ուժեղացում:

Ռազմավարություն 1. Բուժկանխարգելիչ կազմակերպություններում ՄԻԱՎ-ի կանխարգելման ուղղությամբ սանիտարահամաճարակային ռեժիմի ապահովման սանիտարահամաճարակային կանոնների մշակում և գործադրում:

Ռազմավարություն 2. ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտություն կատարող լաբորատորիայի աշխատանքի կազմակերպման (ներառյալ ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման հարցերը) սանիտարահամաճարակային կանոնների մշակում և գործադրում:

Ռազմավարություն 3. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման վերաբերյալ բժշկական անձնակազմի իրազեկության մակարդակի բարձրացում:

Ակնկալվող արդյունքներ

- Կապահովվի ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելումը բուժկանխարգելիչ կազմակերպություններում (2007-2011թթ.):

3. Բուժում, խնամք և աջակցություն

Նպատակ Բուժման, խնամքի և աջակցության համընդհանուր հասանելիության ապահովում:

Ռազմավարություն 1. Հակառետրովիրուսային բուժման համընդհանուր հասանելիության ապահովում:

Ռազմավարություն 2. Հակառետրովիրուսային բուժման արդյունավետության բարձրացում:

Ռազմավարություն 3. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդներին բուժման տրամադրում:

Ռազմավարություն 4. Օպորտունիստական վարակների բուժման և կանխարգելման հասանելիության ապահովում:

Ռազմավարություն 5. Որակյալ խնամքի և աջակցության հասանելիության ապահովում:

Ռազմավարություն 6. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդներին բուժում, խնամք և աջակցություն տրամադրողների ներուժի զարգացում:

Ակնկալվող արդյունքներ

1. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդների 100%-ին հասանելի կլինի հակառետրովիրուսային բուժումը (2010-2011թթ.):
2. Բոլոր հակառետրովիրուսային դեղամիջոցները կգրանցվեն Հայաստանի Հանրապետությունում (2007-2011թթ.):
3. Հանրապետության բոլոր բուժկանխարգելիչ հաստատություններում կիրականացվի ետկոնտակտային կանխարգելման ռազմավարությունը (2011թ.):
4. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդների 100%-ին հասանելի կլինի բոլոր օպորտունիստական հիվանդությունների լաբորատոր ախտորոշումը (2007-2011թթ.):
5. Օպորտունիստական հիվանդությունների կանխարգելման և բուժման կարիք ունեցող ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդների 100%-ը կստանա այդ օգնությունը (2007-2011թթ.):
6. Կներդրվեն դեղամիջոցների նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության և զգայունության որոշման մեթոդները (2008թ.):
7. Բոլոր կարիք ունեցողներին հասանելի կլինի տնային պայմաններում պալիատիվ խնամքը (2010-2011թթ.):
8. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդների 100%-ին հասանելի կլինի սոցիալ-հոգեբանական աջակցությունը (2007-2011թթ.):

9. ՄԻԱՎ-ով վարակված երեխաների և ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդ ծնողներից ծնված երեխաների 100%-ին հասանելի կլինեն սոցիալական վերականգնողական ծառայությունները (2010-2011թթ.):

4. Մոնիտորինգ և գնահատում

Ռազմավարություն 1. Մոնիտորինգի և գնահատման ազգային համակարգի ստեղծում:

Ռազմավարություն 2. Ներքին մոնիտորինգի և գնահատման համակարգի ստեղծում մինչև մոնիտորինգի և գնահատման ազգային համակարգի ստեղծումը:

Ռազմավարություն 3. ՄԻԱՎ-ի տարածվածության տվյալների կայուն հավաքագրման համակարգի, ինչպես նաև վարքագծային հսկման համակարգի ստեղծում ՅՅ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում, ՅՅ պաշտպանության նախարարությունում, ՅՅ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունում և ՅՅ կառավարությանն առընթեր ոստիկանությունում:

Ռազմավարություն 4. Ծրագրի գնահատման իրականացում:

Ակնկալվող արդյունքներ

1. Հայաստանի Հանրապետությունը կունենա ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդման ազգային ծրագրի մոնիտորինգի արդյունավետ համակարգ, ներառյալ տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմները (2008թ.):
2. Հայաստանի Հանրապետությունը կունենա ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդման մոնիտորինգի և գնահատման միասնական ազգային համակարգ (2009թ.):
3. ՄԻԱՎ-ի տարածվածության միտումների գնահատումը կիրականացվի պարբերաբար (2007-2011թթ.):
4. ՄԻԱՎ-ի տարածմանը նպաստող վարքագծային առանձնահատկությունների գնահատումը կիրականացվի պարբերաբար (2007-2011թթ.):

5. Կառավարում, համակարգում և համագործակցություն

1. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդման համակարգում՝ ազգային մակարդակով

- Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների ընդհանուր համակարգումն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովը:
- Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգումը կատարում են այդ մարմինների համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները և պատասխանատու անձինք:

2. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդման համակարգում՝ մարզային մակարդակով

1. Իրականացվող միջոցառումների համակարգումը կատարում են ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված պայքարի միջոցառումները համակարգող մարզային հանձնաժողովները:

2. Այդ հանձնաժողովները ստեղծվում են մարզպետների որոշումներով:

3. Համագործակցություն

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդման ազգային ծրագրի իրականացման համագործակցող կողմերն են.

- Ազգային ժողովի սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովը
- ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի խնդիրներով զբաղվող միջհանձնաժողովային-միջխմբակցային խորհրդարանական խումբը
- ՄԱԿ-ի գործակալությունները
- բազմակողմ/երկկողմ զարգացման գործընկերները
- տեղական և միջազգային ՀԿ-ները
- ՁԼՄ-ները
- Հայ Առաքելական եկեղեցին:

6. Ֆինանսավորում և ֆինանսական միջոցների հավաքագրում

Սույն ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ հասարակական և մասնավոր ոլորտների հատկացումներ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների տրամադրած ֆինանսական աջակցություն, ներառյալ՝ 2007-2008թթ. համար Գլոբալ հիմնադրամի հատկացրած ֆինանսական աջակցությունը:

Կայուն և կանխատեսելի ֆինանսավորում երաշխավորելու համար անհրաժեշտ է.

Ռազմավարություն 1. Միջոցների հավաքագրում և ռեսուրսների մոբիլիզացում:

Ռազմավարություն 2. Միջոցների ռացիոնալ օգտագործում:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդման ազգային ծրագրի միջոցառումների իրականացման

NN ը/կ	Առաջնահերթ միջոցառումներ	Կատարող պետական և տեղական ինքնակառավարման մարմինը	Կատարման ժամկետը
1.	ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին միջգերատեսչական հակազդման զարգացում		
Նպատակ 1.	Ընդլայնել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների, նաև քաղաքացիական հասարակության հակազդումը և ստանձնած միջազգային պարտավորություններն ընդդեմ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի համաճարակի		
	Ամեն տարի անցկացնել ազգային կոնֆերանս ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդմանն ուղղված միջոցառումների հետագա զարգացման և աջակցության նպատակով	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2011թթ.
	Կազմակերպել ազգային կոնֆերանս առավել խոցելի և առավել վտանգի ենթարկվող ղեռահասների ու երիտասարդների իրավունքները պաշտպանելու և իրականացնելու հարցերի վերաբերյալ	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերով նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2008-2011թթ.
	ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության բարձրաստիճան սպայական անձնակազմի համար անցկացնել սեմինար-խորհրդակցություններ՝ ուղղված ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի դեմ պայքարի արդիական խնդիրներին	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2011թթ.
	Անցկացնել սեմինար-խորհրդակցություններ ոստիկանության ներկայացուցիչների համար՝ բնակչության ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խմբերի նկատմամբ նրանց վերաբերմունքը փոխելու և թմրամիջոցների ներարկային օգտագործողների, մարմնավաճառների, հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում իրականացվող կանխարգելիչ ծրագրերի ու ոստիկանության միջև համագործակցություն հաստատելու նպատակով	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն	2007-2011թթ.
	Բաց քննարկումների միջոցով ապահովել ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի խնդիրներով զբաղվող միջհանձնաժողովային-միջխմբակցային խորհրդարանական խմբի, ՀՀ Ազգային ժողովի սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի և ՀՀ առողջապահության նախարարության համագործակցությունը՝ տարեցտարի ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի ծառայությունների, այդ թվում հակառետրովիրուսային և օպորտունիստական վարակների բուժման դեղամիջոցների ձեռքբերման, մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման, կամավոր խորհրդատվության և հետազոտության, բնակչության խոցելի խմբերի շրջանում իրականացվող կանխարգելիչ ծրագրերի ֆինանսավորումն ապահովելու նպատակով անհրաժեշտ պետական հատկացումները մեծացնելու համար	ՀՀ առողջապահության նախարարություն ՄՀՀ	2007-2011թթ.
	Վերանայել և առաջարկ ներկայացնել ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելմանն առնչվող և բնակչության խոցելի խմբերի շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման միջոցառումների արդյունավետության հետ կապված համապատասխան օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու համար	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2008թթ.

	Անցկացնել սեմինար-խորհրդակցություններ տեղական ինքնակառավարման մարմինների, ոստիկանության ներկայացուցիչների, կրթական համակարգի աշխատողների, ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի վարչությունների աշխատողների համար՝ իրազեկության մակարդակի բարձրացման, բնակչության խոցելի խմբերի, այդ թվում առավել խոցելի և առավել վտանգի ենթարկվող դեռահասների ու երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի արդյունավետ կանխարգելման նպատակով	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Երևանի քաղաքապետարան ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերով նախարարություն	2007-2011թթ.
	Կազմակերպել հասարակական միջոցառումներ համայնքային մակարդակով և դրանցում ներգրավել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին և ծառայություններ տրամադրողներին համայնքները համախմբելու համար՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակին արդյունավետ հակազդման նպատակով	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Երևանի քաղաքապետարան	2007-2011թթ.
	Անցկացնել սեմինար-վարժանքներ տեղական և հանրապետական մշակույթի ՁԼՄ-ների ներկայացուցիչների համար՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հարցերն առավել արդյունավետ լուսաբանելու նպատակով	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2011թթ.
	Կազմակերպել կլոր սեղաններ, ներառյալ հեռուստատեսային թոք-շոուներ, շահագրգիռ անձանց և երիտասարդների մասնակցությամբ	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2011թթ.
	Անցկացնել սեմինար-վարժանքներ բնակչության խոցելի խմբերի հետ աշխատող ՀԿ-ների ներկայացուցիչների համար՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման միջոցառումներ իրականացնելու համար նրանց ներուժը զարգացնելու նպատակով	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2011թթ.
	Մշակել ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խմբերի շրջանում վարքագծի փոփոխմանն ուղղված հաղորդակցման ազգային ռազմավարություն	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2011թթ.
Նպատակ 2.	Պայթյալ բնակչության խոցելի խմբերի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդ ծնողներից ծնված երեխաների նկատմամբ խարանի և խտրականության դեմ		
	Բնակչության խոցելի խմբերի, այդ թվում առավել խոցելի և առավել վտանգի ենթարկվող դեռահասների ու երիտասարդների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդ ծնողներից ծնված երեխաների հանդեպ առավել հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերելու նպատակով կրթել ՀԿ-ների աշխատակիցներին և ծառայություններ տրամադրողներին	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2011թթ.
	Անցկացնել հատուկ սեմինար-վարժանքներ ՁԼՄ-ների ներկայացուցիչների համար՝ մամուլ հաղորդագրությունների մշակման, մամուլ ասուլիսների անցկացման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին վերաբերող խնդիրների պատշաճ լուսաբանման հետ կապված հարցերի շուրջ	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2011թթ.
	Աջակցել սոցիալական գործընկերներին (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Արդյունաբերողների և գործարարների միություն, Արհմիությունների կոնֆեդերացիա) աշխատատեղերում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման քաղաքականության, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդ աշխատողների համար սոցիալական աջակցության և խնամքի քաղաքականության, ծրագրերի մշակման և իրականացման հարցում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2007-2011թթ.

2.	ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելում		
Նպատակ 1.	ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելում թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում		
	Շարունակել ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրերի իրականացումը	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2011թթ.
	Աջակցել թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ցանցի ձևավորմանը	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2008թթ
	Ներդնել փոխարինող բուժման ծրագրեր՝ ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ով հիվանդ թմրամիջոցների ներարկային օգտագործողների համար	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2008թթ.
	Անցկացնել սեմինար-վարժանքներ թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելման հարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների ներուժի ամրապնդման նպատակով	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2011թթ.
	Անցկացնել սեմինար-վարժանքներ բժիշկ-նարկոլոգների համար՝ ներառելով ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ով հիվանդ թմրամիջոցների ներարկային օգտագործողների համար փոխարինող բուժմանն առնչվող հարցերը	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2011թթ.
Նպատակ 2.	ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելում մարմնավաճառների շրջանում		
	Շարունակել մարմնավաճառների շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելման ծրագրերի իրականացումը և ընդլայնել ծրագրերի աշխարհագրական ծածկույթը	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2011թթ.
	Անցկացնել սեմինար-վարժանքներ մարմնավաճառների շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելման հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների շրջանում	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2011թթ.
	Աջակցել մարմնավաճառների շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ցանցի ձևավորմանը	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2008թթ.
Նպատակ 3.	ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելում հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում		
	Շարունակել հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելման ծրագրերի իրականացումը և ընդլայնել ծրագրերի աշխարհագրական ծածկույթը	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2011թթ.
	Անցկացնել սեմինար-վարժանքներ հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելման հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներուժի ամրապնդման նպատակով	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2011թթ.
	Աջակցել հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ցանցի ձևավորմանը	ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2008թթ.
Նպատակ 4.	ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելում քրեակատարողական հիմնարկներում գտնվողների շրջանում		
	Շարունակել և ընդլայնել քրեակատարողական հիմնարկներում գտնվողների շրջանում վնասի նվազեցման և «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման ծրագրերի իրականացումը	ՀՀ արդարադատության նախարարություն	2007-2011թթ.
	Իրականացնել քրեակատարողական հիմնարկների ավագ սպայակազմի ուսումնական ուղևորություններ քրեակատարողական հիմնարկներում վնասի նվազեցման ծրագրերի հաջող իրականացման փորձ ունեցող երկրներ	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	2007-2011թթ.
	Անցկացնել սեմինար-խորհրդակցություններ քրեակատարողական հիմնարկների ավագ սպայակազմի համար՝ այդ հիմնարկներում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելման ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	2007-2011թթ.

	Մշակել և հաստատել նորմատիվային փաստաթղթեր՝ քրեակատարողական հիմնարկներում իրականացվող կանխարգելիչ և վնասի նվազեցման միջոցառումների կանոնակարգման համար	ՀՀ արդարադատության նախարարություն	2007-2008թթ.
	Ամեն տարի քրեակատարողական հիմնարկների անձնակազմի համար անցկացնել սեմինար-վարժանքներ «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման և վնասի նվազեցման ծրագրերի իրականացման վերաբերյալ	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	2007-2011թթ.
Նպատակ 5.	ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելում տեղաշարժվող բնակչության շրջանում		
